Գրութիւն Դիւանի Ատրպատականի Հայոց թեմի Առաջնորդի անունով, որով արտօնուեց Նորին Սրբութեան կողմից Աֆանասեակի Պոստիկ հայկական գիւղում հայոց եկեղեցական-ծխական դպրոց բանալ։ 26 օգոստոսի, թ. 1814։

Կոնդակ Սինոդի անունով, որով տեղեկութիւն տալով Հայկ Եպրամիշեանին Մ. Աթոռի միաբանութեան շարքն ընդունելու և սարկաւագ ձեռնադրելու մասին, առաջադրուեց կարգադրութիւն անել նորա միաբանական ոճկի մասին։ 29 օգոստոսի, թ. 1825։

Կոնդակ Տ. Մատթէոս եպիսկոպոսի անունով, որով առաջադրուեց սարկաւագ ձեռնադրել Շուշեցի Հայկ Եպրամիշեանին։ 29 օգոստոսի, թ. 1826։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մահակ Արքեպիսկոպոս Այվազեանի ներկայացրած վեց հազար (6000) ռուբլին, որ ստացել էր Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովից, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների։ 31 օգոստոսի, թ. 1833։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Թադէոս վարդապետի անունով, որով նորա օգտակար ծառայութեան իբրև վարձատրութիւն Ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք շնորհուեց։ 12 յունիսի, թ. 1255։

Կոնդակ Նոր-Բայազիտի Փաշաքեանդ գիւղի Գեղամ քահանայ Տէր Սիմէօնեանի անունով, որով, համաձայն Երևանի Հայոց փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի միջնորդութեան, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց, ինկատի ունենալով, որ մեծ ջանք է թափել հայրենի գիւղում դպրոցական սեպհական շէնք կառուցանել տալու գործում։ 15 յունիսի, թ. 1295։

Կոնդակ Ցաթեի շրջանի գործակալ Ներսէս քահանայ

Տէր-Մինասեանի անունով, որով, Երևանի փոխ-թեմակալի միջնորդութեան համաձայն, լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 24 յունիսի, թ. 1374։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան տարեւոյս յունիսի 29-ի, թ. 1356 մակագրութիւնը, որոշեց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին տալ առաջիկայ սեպտեմբերի 1-ից մինչև 1917 թ. սեպտեմբերի մէկը Արսէն վարդ. Ղլտճեանին մի տարուայ ռոճիկը և անդրադրամը և 50 ռ. ճանապարհածախք ռուսական ռուբ համալսարանական քաղաք գնալու համար։ 1 յուլիսի, թ. 380։

Սինօդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ ապրիլի 30-ի, թ. 1444, յայտարարութիւնն, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգ. կոչման մէջ ընդունել Առաքել Առաքելեանին և առաջադրել Երևանի Տ. փոխթեմակալին ձեռնադրել Առաքելեանին աւագ սարկաւագ Աղէքսանդրապօլի Ս. Աստուածածին եկեղեցու վրայ։ 1 յուլիսի, թ. 382։

Սինօդը՝ լսելով Կարսի շրջանի զինուորական նահանգապետի այս տարուայ յունիսի 18-ի, թ. 7180, գրութիւնն, որոշեց. պատուիրել Երևանի Կոնսիստորիային կարգադրել մկրտել Փերօ Թասուն ղզուն Հայաստանեայց եկեղեցու ծիսով։ 1 յուլիսի, թ. 383։

Սինօդը՝ լսելով Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի յուլիսի 5-ի գրութիւնը, որոշեց. ըստ պատուիրանի Նորին Սրբութեան տալ Մ. Աթոռի Գանձապահ Վրթանէս վարդապետին 300 ռուբլի նպաստ բժշկութեան համար և երկու ամսով արձակուրդ, սկսած այս տարուայ յուլիսի 5-ից և կարգել նորա տեղ ժամանակաւոր Գանձապահ Մ. Աթոռի միաբան Տ. Իսահակ վարդապետին։ 5 յուլիսի, թ. 387։